ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը – Արթուր Մելիքյան.

2. Զբաղեցրած պաշտոնը - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի անասնաբուժության վարչության պետի տեղակալ.

3. Գործուղման վայրը և ժամկետները – Գերմանիայի Դաշնային Հարնապետության մայրաքաղաք Բեռլին, 2024 թվականի ապրիլի 7-10-ը ներառյալ.

4. Հրավիրող կողմը – Եվրոպական GF-TADs կազմակերպության գրասենյակ .

5. Գործուղման նպատակը – «Խոզերի աֆրիկյան ժանտախտի» փորձագետների մեկնարկային խմբի քսաներկուերորդ հանդիպում.

6. Քննարկված թեմաները (հարցերը) – Խոզերի աֆրիկյան ժանտախտի անասնահամաճարակային իրավիճակը մասնակից երկներում, հիվանդության ներթափանցման կանխմանը ուղղված միջոցառումների ներյակացում, հիվանդության բռնկման դեպքում պայքարի միջոցառումները:

7. Հանդիպումները, ելույթները – Մասնակից երկրների (Հայաստանի Հանրապետություն, Վրաստան, Թուրքմենստան, Ադրբեջան, ԵՄ և Բալկանյան երկրներ) կողմից ներկայացվեցին ելույթներ՝ խոզերի աֆրիկյան ժանտախտի անասնահամաճարակային իրավիճակը, հիվանդության ներթափանցման կանխմանը ուղղված միջոցառումների և հիվանդության բռնկման դեպքում պայքարի միջոցառումների ներյակացում: Գերմանիայի անասնաբուժության ոլորտի լիազոր մարմնի կողմից պրակտիկ ցուցադրվեց խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության ներթափանցման կանխմանը ուղղված միջոցառումները՝ վտանգված գոտիներում մետաղական ցանցերի կիրառումը զուգահեռաբար անօդաչու թռչող սարքերի միջոցով վայրի խոզերի հայտնաբերում և որսորդների կողմից ոչնչացումը, անտառային գոտիներում վայրի խոզերի դիակների հայտնաբերում, հավաքում և ոչնչացում, վայրի խոզերի բռնման համար հատուկ թակարդների տեղադրումը և օգտագործումը, վայրի խոզերի և դրանց դիակների հայտնաբերում վարժեցված շների միջոցով:

Հիվանդության օջախը սահմանում են 3 կմ շառավղով, որտեղ իրականացվում է բոլոր խոզերի հարկադիր մորթ, դիակների ոչնչացում դիահրկիզարանում և տնտեսավարողներին պետության կողմից տրամադրվում է կենդանու գնի մինչև 70 % փոխհատուցում:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Գործուղվող՝ Արթուր Մելիքյան 12.04.2024 թ.

(ստորագրությունը, ամսաթիվը)